


որոց սերունդս՝ խնամեցան յաջորդին իւրոյ Հեթմոյ՝ եղբարքն եւ որդիք եւ թոռունք: Բայց ոչ անգիտանայր Լեւոն եւ զայն, զի փառասիրութիւն եւ ազահութիւն՝ դիւրաւ խզեն զայդպիսի կապանս, ոչ այնքան խանդակաթ սիրով հիւսեալս՝ որքան քաղաքական հաշուօք եւ դիտմամբք, որպէս ահա եւ փորձ Անտիոքեայցն հաւաստեաց. եւ զի բարեկամք եւ հիւրք հեռաւորք՝ դուն ուրեք կարեն ժամանել յօգնութիւն, մանաւանդ ՚ի բազմակնճիոն դէպս գծութեանց դրացեաց կամ յեղակարծ արշաւանաց հօր թշնամեաց. ընդդէմ որոց՝ կարօտանայր եւ ինքն՝ հօրագունից եւ առձեռնպատրաստ օժանդակաց, զատ յիւրոց հպատակաց, յորոց շատք՝ լոկ լճութեան կամ մեծարանաց օրինօք յարեալ էին յինքն:



Այսպիսի օժանդակք եւ նիզակակիցք արժանաւորք նմին եւ երազահասք՝ էին երեք կարգ *Սսպետաց* կամ *Չիաւորք* անուանելոց՝ այնր ժամանակի. **Ա, Հիւրընկալք** կամ **Հիւանդապահք**, Hospitaliers, եւ ըստ այսմ արեւմտեայ կոչման՝ յեղեալ յայնժամ եւ ՚ի հայրմս՝ **Ոսպիթալին ձիաւորքն** կամ **Ֆրէքքն**. քանզի ՚ի սկզբան եկաւորութեան Խաչակրաց յայսկոյս՝ նուիրեցին ոմանք ՚ի նոցանէ զանձինս՝ ոչ միայն ՚ի մարտ պատերազի ընդ այլադէսս՝ հակառակորդս քրիստոնէից, այլ եւ ՚ի դարման հիւանդաց սոցին եւ պանդխտաց, վասն այսորիկ այնպէս կոչեցան: **Բ. Տաճարականքն**, Templiers, կոչեցեալք ՚ի մերոցս՝ **Դամփլուն Չիաւորքն**, զի առ տեղեաւ տաճարին Սողոմոնի յերուսաղէմ հաստատեցին նախ գտուն իւրեանց: **Գ. Տեւտոնեանք** կամ **Ալամանք**, Teutons, ըստ այլ եւ այլ կոչմանց